«ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ԱՐԽԻՎԱՅԻՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏՈՒՄ

Հայոց ազգային հերոսավեպը՝ «Սասնա ծռերը», պատմվել է նաև քրդերեն, քրդերի միջավայրում[1]: Ստորև ներկայացվող պատումը ևս հաստատում է այդ իրողությունը: Այն գրի է առել Արամ Դանոյանը[2] 1939 թ. հուլիսի 30-ին Ալագյազ գյուղում, 72-ամյա բանասաց, աշուղ Ահմեդ Չոլոյից: Բանահավաքը մատնանշում է, որ վերջինս վեպը պատմում է հայերեն, քրդերեն ու ադրբեջաներեն:

Հրապարակվող պատումի ձեռագիրը՝ մեքենագիր վիճակում, գտնվում է Հայաստանի ազգային արխիվում՝ գրականագետ Խորեն Սարգսյանի ֆոնդում (ֆ. 121, ց. 1, գ. 326, թ. 1-6): Խ. Սարգսյանն այդ տարիներին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտի գիտական քարտուղարն էր: Բնագիրը՝ ծանոթությամբ հանդերձ, տպագրվում է անփոփոխ:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԻ ՄԻՆՉ ԱՅԺՄ ԳՐԻ ՉԱՌՆՎԱԾ ՆՈՐ ՎԱՐԻԱՆՏ

Պատմում է աշուղ Ահմեդ Չոլոն՝ Ալագյազի շրջանից, Ալագյազ գյուղացի, 72 տարեկան, անգրագետ, քուրդ, կոլտնտեսության հյուսն, որը հայտնի է շրջանում և հանրապետության մեջ որպես ժողովրդական ստեղծագործող և աշուղ: Ունի Լենինի, Ստալինի, Վորոշիլովի, Կարլ Մարքսի մասին իր հորինած երգերը: Հայտնի է որպես հեքիաթներ պատմող: Մասնակցել է հանրապետական օլիմպիադային և 1937 թ. Ադրբեջանում կայացած աշուղների հավաքին: Նա «Սասունցի Դավիթը» պատմում է հայերեն, ադրբեջաներեն և քրդերեն:

«Սասունցի Դավիթի» այս վարիանտն առաջին անգամ գրի է առնված 1939 թ. հուլիսի 30-ին Ալագյազ գյուղում, Արամ Դանոյանի կողմից:

Սամսոնի Դավիթ

Մեկ օր Սամսոնի ջուրը կտրվում է: Դավիթն իմանում է ու հարցնում իր ամուն – Ամի՛ Օհան, էս ի՞նչ մարդ է եկել մեր ջուրը կտրել, ես պետք է գնամ էդ մարդու հետ կռվեմ:

---

[1] *Սասնա ծռեր, հ. Գ, պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի, Երևան, 1979, էջ 18:*

[2] *Եղել է «Խորհրդային Հայաստան» թերթի թղթակից, ուրիշ տվյալներ հայտնի չեն:*

Օհանը ասում է Դավիթին, որ ջուրը կտրողը Մելիք Մսրն է, նա շատ ուժեղ մարդ է, նրա հետ դժվար է կռվել:

Դավիթը ելավ, ձին քաշեց, զենքերը ժողվեց, գնաց Մելիքի դեմ կռվելու: Դավիթը գնաց Մելիքի դեմ կռվելու: Էդ վախտը Մելիքի զորքից դուրս եկավ մի հալիվոր մարդ: Դավիթը ասաց նրան.– Էս ի՞նչ զորք է հավաքվել, ի՞նչ նպատակով:

Էդ հալիվորի անունը Սահակ էր, նա ասաց Դավթին.– Դա Մելիք Մսրի զորքերն են, եկել են Սամսոնի երկրին տիրանալու:

Դավիթը ասաց.– Եթե եկել է երկրին տիրանալու, բա էլ ինչո՞ւ է ջուրը կտրել:

Սահակը ասաց.– Մելիքը եկել է Օհանին հանձնատուր անի, եթե հանձնատուր չի ըլնի, թող կռվի իր հետ, ով կհաղթի, նրան կմնա երկիրը:

Դավիթը ասաց.– Դուք կարծու՞մ եք, թե Սամսոնի մեջ բոլորը կիներ են, չկա ոչ մի տղամարդ, որ ազատ եկել եք մեր ջուրը կտրել: Ես Սամսոնի տերն եմ, մեր ջուրը թողեք և գնացեք ձեր երկիրը կանգնեք: Ես Սամսոնի տերն եմ, դուք վերադարձեք, հայտնեք Մելիքին, թող իր զորքը հետ քաշի, եթե չի քաշի, ես կկռվեմ նրա հետ:

Սահակը գնաց Մելիք Մսրին հայտնելու Դավիթի ասածը, բայց Մելիք Մսրին քնած էր, ինչքան փորձեց, չզարթնեց: Երեք գիշեր, երեք ցերեկ քնել էր, պետք է նորից քներ չորս քշեր, չորս ցերեկ էլ:

Սահակը բերում է գութանի երկթե խոփը, տաքացնում, դնում է Մելիքի ոտների տակ: Մելիքը զարթնեց, ասաց Սահակին.– Էս ի՞նչ կեղտոտ եք պահել չադիրը, լվերը կծում են ինձ, չեն թողնում, որ քնեմ:

Սահակը ասաց, որ Սամսոնից մի մարդ է եկել ու քաջ-քաջ խոսում է, կասա. «Մեր ջուրը բաց թողեք, թե չէ կելնեմ ձեր դեմ կռվելու»:

Մելիքը ելավ գնաց Դավթի դիմաց, ասավ.– Սա ի՞նչ երեխա է ձիու վրա նստած, որ եկել է իմ դեմ կռվի և կուզի մնա, Սամսոնի տերը դառնա: Ինչո՞ւ Օհանին չի ղրկել, էս երեխին է ղրկել իմ դեմ կռվելու:

Դավիթը ասաց.– Օհանը քեզի բանի տեղ չի դնում, ընդուր համար ջահելներին է ուղարկում քո դեմ:

Մելիք Մսրան զայրացավ, գլուխը բարձրացրեց, ասաց.– Ուրեմն Օհանը ինձ բանի տեղ չի դնում, ես էլ քեզ էնպես անեմ, հողից ես՝ հող դառնաս:

Դավիթը ասաց.– Որ դու ինձ համարում ես ջահել, առաջ ինձ փորձի, հետո անցի Օհանին:

Մելիքը նստեց իր ձին և ասաց Դավիթին.– Առաջի դուռը ի՞մս է, թե՞ քոնը:

Դավիթը ասաց.– Թող քոնը լինի:

Մելիքը ձին քշեց հետ, թափ առավ, եկավ գուրզով խփեց Դավիթին: Գուրզը խփեց, չդիպավ, բայց փոթորիկի և ամպի նման թոզ ու դուման բարձրացավ: Մելիքը ծիծաղեց, ասաց.– Ա՜խ, ա՜խ, դու երեխա էիր, եկար իմ դեմ կռվելու, հող էիր՝ հող դարձար:

Դավիթը ասաց քաջի նման.– Ես կենդանի եմ, իմ առաջ հողը դու ես, այժմ հարվածը քո՞նն է, թե իմը: Մելիքը ասաց.– Քոնն է:

Դավիթը գնաց, ուժ առավ, եկավ խփելու Մելիքին, Մելիքը իմացավ, որ շատ ուժեղ է գալիս, իրեն պահելու համար քցեց մոտիկ հորի մեջ:

Դավիթը ասաց.– Ի՞նչու քեզ քցիր հորի մեջ:

Մելիքը ասաց.– Բա ինչու՞ դու ինձնից յան տվիր, այնպես էլ ես արի:

Մելիքը նորից հարցնում է.– Հերթը ու՞մն է:

Դավիթը ասաց.– Հերթը քոնն է:

Մելիքը հորից դուրս եկավ, բայց նրա ջամդաքը վախից թուլացել ու դողում էր:

Մելիքը մտածեց. «Գնամ, գամ նորից, էնպիսի ուժեղ դրոբ զարկեմ, որ Դավիթը տեղից չշարժվի»: Այդպես էլ արավ: Էս անգամ ավելի հեռվից թափ առավ, զարկեց Դավթին, բայց գուրզը նորից չդիպավ, նաև թոզ ու դումանն ամպերի նման բարձրացավ:

Մելիքը դարձավ իր զորքերին, ասաց.– Հող էր՝ հող դարձավ:

Դավիթը ծիծաղելով պատասխանեց.– Ես հող չեմ, ես կենդանի եմ, ես քեզ հող կդարձնեմ:

Նորից Դավիթը հարցրեց.– Խփելու հերթը ու՞մն է:

Մելիքը տխուր դեմքով պատասխանեց.– Հերթը իմն է:

Դավիթը ասաց.– Եթե ճիշտն ասես, հերթը իմս է, երևի վախից խելքդ կորցրել ես:

Մելիքը ասաց.– Եթե հերթը քոնն է, թող քոնը լինի, բայց ափսոս որ ջահել ես, ինձ ժամ-ժամանակ տուր, գնամ չադիրս, զրահներս հագնեմ, հետո կտեսնես, թե ես ի՞նչ եմ: Ես նոր էի քնից զարթնել, զրահներս չէի հագել:

Մելիքը գնաց իր չադիրը, հագավ իր զենք ու զրահը, վրայից հագավ յոթ հատ գոմշի կաշի, որ Դավթի դրոբը քյար չանի: Գլխին դրեց բրոնզե սաղավարթ, որ հարվածը գլխին չազդի:

Մելիքը դուրս եկավ ասաց.– Ես պատրաստ եմ: Բայց Դավիթը չվախեցավ նրա զենքից-զրահից:

Դավթի հերսերը եկավ, ձին նստեց, հետ գնաց թափ առնելու: Դավիթն ասաց.– Էս անգամ թրով պետք է խփեմ:

Դավիթը թրով խփեց, թուրը կտրեց յոթ գոմշի կաշին, բրոնզե զրահը և թրի ծայրը հասավ Մելիքի մարմնին:

Մելիքը տեսավ, որ իզուր է Դավթի դեմ կռվում, ուզեց խորամանկությամբ վնասել Դավթին:

Մելիքը ասաց.– Դավի՛թ, ես չեմ ուզում քեզ նորից զարկել, դու ջահել ես, արի դառ ինձ փեսա, մի գեղեցիկ աղջիկ ունեմ, տամ քեզ, ես ծերացել եմ, դու կդառնաս Սամսոնի և Մսրա տերը:

Մելիքը հրաման տվեց իր զորքերը հետ գնան իրենց տեղը և կտրած ջուրը բաց թողնեն: Սամսոնի ժողովուրդը երբ որ ջուրը տեսավ, շատ ուրախացավ:

Խաբարը տարան Օհանին, Օհանը շատ ուրախացավ, ասաց, որ Սամսոնում կա մի մարդ, որը կարող է երկիրը պաշտպանել Մելիքի հարձակումներից:

Մելիքն ասաց Դավիթին.– Գալու՞ ես աղջկաս տանես:

Դավիթն ասաց.– Այո՛, գալու եմ:

Դավիթը կասկածեց մելիքի խորամանկության վրա և մտածեց. «Լավ է գնամ ծերունի Սահակին հարցնեմ, թե՝ Մելիքն աղջիկ ունի, թե չունի»:

Սահակն ասաց.– Աղջիկ ունի, բայց Մելիքի մոտ մենակ մի գնա, սպասի, միասին կգնանք:

Մելիքը գնաց, իր Շողիկ աղջկան հայտնեց, թե մի քաջ տղա կա, պետք է նրա հետ ապրես, իսկ մենք նրան պետք է սպանենք:

Աղջիկն ասաց.– Թող գնամ տեսնեմ, թե ինչպիսի տղա է, հետո կասեմ իմ կարծիքը սպանելու մասին:

Աղջիկն ասաց.– Բերեք էդ մարդուն:

Մարդ ուղարկեցին Սահակի տուն՝ Դավիթին բերելու:

Դավիթը Սահակի հետ միասին եկավ Մելիքի տուն:

Սահակն ասել էր Դավիթին, որ Մելիքը շատ մուխանաթ, խորամանկ մարդ է, պետք է զգույշ լինել:

Մելիքն ասաց Դավթին.– Նայիր իմ շենքերին և իմ գեղեցիկ աղջկան, տես ինչպիսի շենքեր ունեմ…

Աղջիկը դուրս եկավ շենքից: Մելիքն ասաց.– Սա է իմ աղջիկը, հավանու՞մ ես, թե ոչ:

Դավիթն ասաց.– Կտեսնեմ, հետո կասեմ:

Աղջիկը երբ տեսավ երիտասարդ, ջահել, գեղեցիկ Դավիթին, սիրահարվեց Դավթի վրա, ասաց.– Դու մտար իմ սրտի մեջ, արի գնանք իմ սենյակը, առանձին խոսենք:

Դավիթը գնաց մեկ առանձին սենյակ՝ խոսելու Շողիկի հետ:

Աղջիկն ասաց.– Դավի՛թ, ես քեզ շատ եմ սիրում, իմ հորից բարձր եմ դասում քեզ, հայրս մուխանաթ մարդ է, զգուշացիր նրանից, ինձ հայտնել է իր չար միտքը, ուզում է քո գլխին մի փորձանք բերի: Դու չպետք է հորս դոնաղ լինես, պետք է գնաս ծերունի Սահակի տուն, որ վաղը քո ուժը տեսնեմ:

Մելիքին խաբար տարան, թե Դավիթը քո աղջկան չհավանեց: Մելիքը զայրացավ, ասաց.– Իմ քաղաքի մեջ պետք է Դավիթին սպանեմ, քանի որ նա իմ աղջկա հետ խոսել է:

Մելիքը հայտնեց Դավիթին, ասաց.– Մենք նորից թշնամիներ ենք, պետք է իմ քաղաքի մեջ իրար հետ կռվենք:

Դավիթն ասաց.– Ես պատրաստ եմ:

Մսրա ժողովուրդը տեսավ՝ հիացավ Դավիթի գեղեցիկ տեսքով. ամեն ժամանակ գնում էին նրա հետևից, ուզում էին ասել, որ «մենք քեզ սիրում ենք, մենք քո կողմնակիցներն ենք», բայց Մելիքի ահից ձեն չէին հանում:

Մելիքը մտածում է ուրիշ կերպով վնասել Դավիթին: Մտածում է. «Դավիթը ջահել է, գուլաշ կպչել չգիտի, լավ է գուլաշ կպչենք, ես նրան կհաղթեմ, վիզը կկտրեմ»:

Գուլաշ են կպչում: Մելիքն ասում է.– Դավի՛թ, դու ջահել ես, նոր ես եկել Մսրա երկիրը, լավ նայիր իմ շինած շենքերին: Դավիթն իմանում է Մելիքի կեղծ միտքը, նրա նամարդությունը, որ Դավիթի ուշադրությունն ուզում է հեռացնի ուրիշ կողմ և նրան զցի գետինը: Դավիթը պատասխանում է.– Ես վաղուց եմ տեսել քո շենքերը:

Գուլաշ են կպչում: Դավիթը Մելիքին քցում է գետին, նրա ժողովուրդն այս բանի համար շատ է ուրախանում:

Մելիքն ասաց Դավթին.– Դու չպետք է համարես քո հաղթությունը, քանի որ դու ջահել ես, ես ահել:

Դավիթն ասաց.– Քանի որ դու քո հոգուց վախենում ես, ես քեզ չեմ սպանելու, քեզ պետք է պահեմ, ձեռք ու ոտքդ կապեմ, դնեմ բանտ, այնտեղ մահանաս, որովհետև դու ժողովրդին շատ ես չարչարել և շատ նեղություն տվել, դու պետք է չարչարվես:

Ձեռք ու ոտքը կապեցին, տարան բանտը դրեցին: Դավիթն ամուսնացավ Մելիքի աղջիկ Շողիկի հետ, դարձավ Սամսոնի և Մսրա երկրների տերը, պատերազմները վերջացան, երկիրը խաղաղվեց, երկու երկրի ժողովուրդները միասին խաղաղ ու հաշտ ապրեցին: